

է, որի ներագործական դերից ամենից շատ կարող է ծագել բոլոր մեծ պետութիւնների մէջ ընդհանուր պատերազմ, ուստի Մանջուրական հարցում ծավոնիայից ոչ պակաս շահագրգռուած Ամերիկան դիմեց մեծ պետութիւններին մի առաջարկով. փոխադարձաբար երաշխատորել Զինաստանի չեղոքութիւնը և նրա վարչական էութիւնը (entité administrative): Այդ առաջարկը համակրանքով ընդունեցին Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան և Իտալիան:

Դործողութիւնների չեղոքութիւնը պետութիւնների կողմից չի արգելում նկատել դրանց համակրանքների այս կամ այն կողմ թեքուիլը. սլաւոնական ազգերը—սերբ, բուլղար, չեխ, խորվատ, չեռնօքորցի և բուռն համակրանք են ցոյց տալիս սլաւոնների հզօր պաշտպան Ռուսաստանին, սրա կողմն է նաև Ֆրանսիայի և Գերմանիայի համակրանքը, ի բաց առած այդ երկրների արմատական կուսակցութիւնները:

I. U.

Փետրուարի 23.

—Գերմանիայի զանազան գիտական կենտրոններում տօնուեց հոչակաւոր փիլիսոփա Կանտի մահուան (1804 թ., փետրուարի 12) հարիւրամենակը: Առանձին հանդիսաւորութեամբ յարգուեց այդ մեծ գերմանացու յիշատակը նրա ծննդավայր կեռնիգսբերգ քաղաքում, որի համալսարանում նա դասախոսել էր: Կանտը նախ քան իբրև փիլիսոփա հուաչակուելը յայտնի դարձաւ իբրև առաջնակարգ գիտնական: ճիշտ գիտութիւնների մէջ նա անմահացաւ՝ տալով տիեզերքի կազմութեան ֆիզիկօ-աստղագիտական թէորիան, որ այսօր էլ կրում է նրա անունը (Կանտ-Լավլասեան տեսութիւն): Կանտից յետոյ ծիծագելի է տեսնել «փիլիսոփաներ» առանց ճիշտ գիտութիւնների հիմնաւոր պատրաստութեան... Հալածանք կրելով «Կրօնը միայն բանականութեան սահմաններում» գրուածքի համար՝ նա դադարեց շօշափելու այդ հարցերը և գրեց իր անմահ «Մաքուր բանականութեան քննադատութիւնը», —այնքան նշանաւոր մի գործ, որից յետոյ փիլիսոփայութեան պատմութիւնը բաժանվում է երկու շրջանի. մինչև Կանտ և Կանտից յետոյ: Առասարակ չափազանց դժուար է փիլիսոփայական նախապատրաստութիւն չունեցող ընթերցողներին հասկանալի ձեռվ բացատըրել Կանտի փիլիսոփայութեան ծուծը. բայց և այնպէս

մի այլ անգամ կ'աշխատենք ծանօթացնել ասենամեծ մտածողի մտքերի հետ ըստ կարելոյն դիւրամատչելի ձևով:

— «Արարատում» կարգում ենք. «Նոյեմբեր ամսի 5-ին Պարսկաստանի և Հնդկաստանի հայոց առաջնորդը, տէր Սահակ արքեպիսկոպոսը, ճանապարհ է ընկել դէպի Հնդկաստան այցելելու իր հօտին: Նախապէս յայտնած լինելով ազգին Վեհափառ Հայրապետին իր դիւրատրութեան մասին, ինդրել և ստացել է շրջարերական օրհնութեան կոնդակ ուղղուած այնտեղի տարագիր ժողովրդին: Այսպիսի մի ճանապարհորդութիւն կապուած է մեծամեծ դժուարութիւնների հետ, ցամաքային ճանապարհով Պարսկաստանից մինչև Հնդկաստան, կամ ծովային ճանապարհով Սուէդեան Ջրանցքի վրայով, որոնցից թէ մէկը և թէ միւսը, թէ շատ մեծածախս է և թէ ժամանակ շատ է պահանջում: Հնդկաստան վերջին անգամ այցելել է հանգուցեալ տէր նսայի արքեպիսկոպոսը, որի հետ պատահած մի քանի անախորժութիւններ տեղական հայերի կողմից թելալրել են տէր Սահակ արքեպիսկոպոսին շրջանայեաց լինել և իր այցելութեանը աւելի պաշտօնական կերպարանք տալ: Այդ դիւրատրութեամբ նա Թեհրանի անգլիական գեսպանի միջոցով դիմել է Հնդկաստանի փոխարքային և յայտնի իր դիւրատրութիւնը: Այժմ նա Հնդկաստան է գնում նախապէս որոշուած ծրագրով. ամբողջ ճանապարհին նրան ցոյց կը տրուի պաշտօնական ընդունելութիւն, մի հանգամանք, որ կարենութիւն տալով նրա դիրքին, կը նպաստի կարգաւորելու մի շարք ազգային եկեղեցական խնդիրներ, որ տարիներից ի վեր մնացել էին առկաիս: Բարի երթ սրբազն հօրը և յաջողութիւն իր օգտակար ձեռնարկութիւններին»:

Մենք էլ ցանկանում ենք որ այդ այցելութիւնը մի խթան լինի Հնդկաստանի հայերի վերածնութեան համար: Մինչև այժմ հադիահյերը օգտուել են անգլիական ազատ կարգերից կուլտուրական մի ազգի համար ոչ վայել ձևով—օտարանալով իսպառ իրանց ազգութիւնից:

— «Մշակ»-ին հաղորդում են էջմիածնից, որ յունուարի 30-ին ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը կոնդակով արձակել է եղիշէ ծայրագոյն վարդապետ Մուրադեանին Ատրպատականի թեմի առաջնորդի պաշտօնից. համաձայն իր խնդիրքի և ժամանակաւորապէս թեմի կառավարիչ է նշանակել փոխանորդ Մեսրոպ վարդ. Մագուտեանին Մուրադեան վարդապետի արձակման մասին Վեհափառ Կաթողիկոսը յայտնել է առանձին նամակով պարսից գահաժառանգին, որ վարում է և Ատրպատականի ընդհանուր նահանգապետի պաշտօնը:

Պէտք է գո՞ն լինել, կ'աւելացնենք մենք, որ այդպիսով վերջ դրուեց այն խառնակ դրութեան, որ ստեղծուել էր այդ թեմում առաջնորդի պատասխանատու պաշտօնի համար անազող ընտրութեան շնորհիւ:

—Պարսկաստանում այս յունուար ամսի սկզբին լոյս տեսաւ «Նոր-Զուղայի Լրաբեր» թերթը։ Ահա թէ ինչ է ասուած նրա «ազդի»ի մէջ։

«Յաճախ կարիք է զգացցում հրատարակելու եկեղեցական կրօնական կրթական ընդհանուր կարգադրութիւններ Պարսկա-Հնդկաստանի եկեղեցիների և դպրոցների պաշտօնեաների և հայ ժողովրդի ծանօթութեան համար։ մինչև այժմ միշտ առանձին թերթիկներով էին լոյս տեսնում, սակայն այսուհետեւ աւելի յարմարութեան և կանոնաւրութեան համար կը տպագրուին սոյն թերթում, որ լոյս կը տեսնի ամիսը մի անգտմ։

Կ'տպագրուին հոգևոր իշխանութեան կարգադրութիւնները, մեր ազգային կրթական և բարեգործական հաստատութեանց տեղեկագրերն ու հաշիւները, հայ ժողովրդական դրութեան մասին զեկուցագրեր, երբեմն ևս յարմար յօդուածներ ժողովրդեան ընթերցանութեան համար, որչափով իհարկէ միջոցներըն ու հանգամանքները կը ներեն»։

Ցանկանում ենք աջողութիւն։